ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

Դաստիարակների մասնախմբի նիստի

Նիստը կայացել 2025-2026 ուստարվա դեկտեմբերի 25-ին:

Նիստին ներկա էին մասնախմբի բոլոր անդամները և տնօրենի տեղակալ Լ. Մանվելյանը:

Օրակարգում՝

1. Մասնախմբի նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ դաստիարակչական աշխատանքների համակարգող Մ.Հարությունյան)
2. Դասարանների ամանորյա ձևավորման արդյունքների ամփոփում (զեկուցող՝ դաստիարակչական աշխատանքների համակարգող Մ.Հարությունյան)
3. Համագործակցություն Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հետ (զեկուցող՝ դաստիարակչական աշխատանքների համակարգող Մ.Հարությունյան)
4. Ամանորյա միջոցառումների ամփոփում (զեկուցող՝ դաստիարակչական աշխատանքների համակարգող Մ.Հարությունյան)

Լսեցին՝

1. Մասնախմբի ղեկավար՝ Մ. Հարությունյանը ներկայացրեց դեկտեմբերի 25-ի նիստի օրակարգը՝ բաղկացած 4 հարցից:

Լսեցին՝

2. Անդրադառնալով ամանորին ընդհառաջ դասարանում և ընդհանուր դպրոցում իրականացված ձևավորման աշխատանքներին՝ դաստիարակչական աշխատանքների համակարգողը նշեց, որ դրանք իրականացվել են պատշաճ և կազմակերպված ձևով՝ հաշվի առնելով կրթական միջավայրի և սովորողների առանձնահատկությունները: Աշխատանքների ընթացքում դաստիարակները ցուցաբերել են բարձր պատասխանատվություն և ստեղծագործական մոտեցում՝ ապահովելով նաև սովորողների ներգրավվածությունը իրենց հնարավորությունների սահմանում: Արդյունքում դպրոցում ապահովվել է բարենպաստ հուզական միջավայր և տոնական մթնոլորտ:

Լսեցին՝

3. Անդրադառնալով Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հետ համագործակցությանը՝ մասնախմբի ղեկավարը տեղեկացրեց, որ 2025 թվականի դեկտեմբերի 10-ին դպրոցը հյուրընկալել է գրադարանի աշխատակցուհի Մ. Գրիգորյանին: Վերջինս սովորողների համար կազմակերպել և ներկայացրել է «Ճուտիկ» հեքիաթ-օպերան, որը մատուցվել է երեխաների տարիքային և զարգացման առանձնահատկություններին համապատասխան ձևաչափով: Միջոցառումը նպաստել է հեքիաթի նկատմամբ սովորողների հետաքրքրության խթանմանը՝ ապահովելով նրանց հնարավորություններին համապատասխան հուզական ներգրավվածություն և գեղարվեստական ընկալման զարգացում:

Լսեցին՝

4. Անդրադառնալով ամանորյա միջոցառումների ամփոփմանը՝ դաստիարակչական աշխատանքների համակարգողը տեղեկացրեց, որ Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ. 17 հատուկ դպրոցում 2025 թվականի դեկտեմբերի 15–19-ը անցկացվել է ամանորյա միջոցառումների շարք: Միջոցառումների ամբողջական կազմակերպման և իրականացման գործընթացում դաստիարակներն ակտիվորեն ներգրավված են եղել՝ ձևավորելով դասարանային և համադպրոցական բեմադրություններ, փոքրիկ դերախաղեր և ներկայացումներ՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, կրթական և զարգացման առանձնահատկությունները: Դաստիարակների ստեղծագործական մոտեցումը և հետևողական մասնակցությունը հնարավորություն է տվել յուրաքանչյուր միջոցառում դարձնել ուսուցման և խաղի արդյունավետ համադրություն՝ նպաստելով սովորողների հուզական ներգրավվածությանը, համագործակցության, փոխօգնության, պատասխանատվության և ինքնարտահայտման հմտությունների զարգացմանը: Յուրաքանչյուր միջոցառման ընթացքում դաստիարակները վերահսկել և աջակցել են սովորողների ակտիվ ներգրավվածությանը

Արտահայտվեցին՝

Փոխտնօրեն Լ. Մանվելյանը բարձր գնահատեց ամանորյա միջոցառումների կազմակերպումը և իրականացումը, ընդգծելով դաստիարակների հետևողականությունը, ստեղծագործական մոտեցումը և ակտիվ ներգրավվածությունը բոլոր փուլերում: Նա նշեց, որ դաստիարակների աշխատանքի շնորհիվ ապահովվել է բարենպաստ հուզական միջավայր, տոնական մթնոլորտ և սովորողների արդյունավետ ներգրավվածություն, ինչպես նաև ընդգծվեց դպրոցի համայնքային միասնությունը և համագործակցային միջավայրը:

Որոշեցին

1. Հաստատել մասնախմբի դեկտեմբերի 25-ի նիստի օրակարգ:
2. Ամանորին ընդառաջ դասարաններում և դպրոցում իրականացված ձևավորման աշխատանքների վերաբերյալ դաստիարակչական աշխատանքների համակարգողի զեկուցումն ընդունել ի գիտություն:
3. Շարունակել համագործակցությունը Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հետ և համագործակցության շրջանակներում նախատեսել ևս մեկ հանդիպում 2026 թվականի ապրիլ ամսին:
4. Ի գիտություն ընդունել ամանորյա միջոցառումների ամփոփման վերաբերյալ դաստիարակչական աշխատանքների համակարգողի զեկուցումը և շարունակել և ընդլայնել դաստիարակների մասնակցությունը ուսումնական և տոնական ծրագրերում՝ նպատակ ունենալով բարձրացնել սովորողների ներգրավվածությունը և ստեղծագործական հմտությունները:

Դաստիարակչական աշխատանքների համակարգող՝ **Մ. Հարությունյան**

Քարտուղար՝ **Ռ. Բաղալյան**

29.12.2025